


Книжный кабинет

правильный и полный Запись
и обозначение



1888

71.408

891.99.032

Հ-25

NOV 2011

ՐԱՓՓԻՒ

ՍԳԱԼԻ ՄԱՀԸ

ԵԿ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„Որ մահկանացու ծնեալ, անմահ
զիւրն յիշատակ եթող“:

Մոլոք Խորենացի, Գլուխ Գ.

1008
36119

ՈՂԲԱՑ ԵՒ ԳՐԵՑ

Հ. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

ՏՓԽԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1888



05.06.2013

4900

Доз. Ценз. Тифлисъ, 25-го Июня 1888 года.
Тип. М. Вартанянца, Тройц. пер. домъ №11

ՐԱՅԹԻՒ

ՍԳԱԼԻ ՄԱԿԸ



Ա.

Յանձնաւու ճակատ մասից պատճեն արդարոց օրման-
վագուն հիմքամատ ըստ Խամբար եղիցին մասնաւու
առաջաւու պատճեն մասից Հայ Դիցաղակն՝ զարթիր նարից սգաղգեաց,
Վշտամիմունց կնդնդոցիւ՝ հնչէ լարերդ ողբ ու լաց.
Թէպէտ չունիս գողթնի գուսան ողբ յօրինող քեզ համար,
Տես, որ համայն Հայք Կովկասին քեզ հետ ողբան վշտահար:
Զի մեռաւ այսօր՝ ԲԱՅԹԻՆ քո ծանօթ,
Գնաւ գոււ, գնաւ, տար այս մահուան բօթ:

Ծեր Մասրսի՝ Սուրբ գագաթից նայէ տիսուր հանդիսին,
Քանի՛ հազար սիրտ պատարուն արտսունք թափեն գագաղին.
Ծովն ալետամզ կարծես սասափիկ զարնէ շոկնդ կոհակաց,
Ամբոխն այնալէս կայ ալեկոծ՝ գառն արկածին վշտատանց:
Ո՛չ, ի՞նչ տեսարան, զի Կովկասն ամբողջ
Սեւ սուգ է մտել Հայ ազգին հետ ողջ:

Խաշադրօշ թափորն առաջ գունդ են կազմել Կղերներ,
Երդ Սիօնին ողբ է փոխուել կորուսա Որդւոյն կորեվեր.

Կարծես հոգիք Հայ Դիւցազանց՝ 'ի սուգ Հայոց դառնաղէտ,
Ողիմպոսից յերկիր իջած՝ ողբ կըկարդան մեզի հետ:
Այս՝ ողբում են մեր սուրբ նախնիքներ,
Թող ողբան Հայեր՝ թէ անցնին դարեր:

Տիրահնչիւն դողանջելով՝ ափ Կուր գետին զանգակներ,
Արք եւ կանայք շուրջ տաճարին՝ լան եւ կոծեն վշտմբեր.
Դագաղն հասաւ բիւր ամբոխիւ՝ մինչեւ 'ի ծոց Տաճարին,
Ուր աջ ահեակ կարծես 'ի տես՝ գուգիք զուարթնոց ծածանին.
Որտեղ սրբութեան՝ Խորհուրդն ահաւոր
Հրաժեշտ պէտք է տար Զաւակին՝ սուրբ Մօր:

Ուր Քեր թողի կեանքին համար՝ կղերն անկեղծ դրուատեց,
Հոգերգողին քաղցր խօսքով՝ վիշտն ամբոխին ամոքեց.
Գորովագութ սուրբ Ծնողին աչքերն արտառուք լցուեցաւ,
Մեղսաքաւիչ սուրբ բերանով՝ համբոյր տուեց բաժնեցաւ:
«Յիշատակն անմահ օրհնութեամբ լիցի»,
Սմբոխն 'ի սրտէ կրկնեց «Եղիցի»:

Դագաղն դկայ առաւ գաւթին՝ շրջապատած թափարով,
Որ բաժանման սուզ վայրկենից տան անձկալոյն սէր, գորով.
Ուր կարգացին աւերժ կեանքին ընտիր ընտիր դրուագներ,
Անմահ ճակտոց մահն խոժու կարծես ըզձիւ խուսափէր:
Թէպէտ մահացած՝ բայց միշտ է անմահ,
Վաստակած հոգւոյն փառքն է գերագահ:

Բիւր շրթունքներ սառ երեսին՝ ով չէր ուզել տուլ համբոյր,
Բայց թափօրը ընկաւ ուզին՝ վերջին աղէտ ընդհանուր,
Թէպէտ երկնք չէր գաղարում անձեւն առատ թափելից,
Բայց ամբոխը հոգով մարմնով ըլհեռացաւ Դագաղից:
Այլ միշտ գիրկ ընդ խառ՝ մնաց Դագաղին,
Անմոռաց սիրով իւր քաջ Քեր թողին:

Պերձ Տիխիսի փողոցներից գաղարած էր անց ու դարձ,
Աղքատ, հարուստ, տգէտ, գիտուն ուղին վերայ խոնուած,
Քնքուշ սեռին աչքերն եւ՝ չէին պակաս տարավիից,
Այլ յորդառատ ցողով աղի եւ հառաջանք խոր սրտից:
Լայն գորովով՝ լային սրտատանջ,
Եւ ամեն բերան կրկնում էր հառաջ:

Իսկ խաժամուժ ամբոխն ափշած՝ յորդան կրտար ընդառաջ,
Ազգ եւ աղինք այլակրօնք՝ դիզվում էին ձախ եւ աջ.
Նոցա յարգանք ջերմեռանդ էր՝ Հայ քերթողին արժանեաց,
Նոցա սրտի ախ հառաջներ՝ ցաւ էր անկեղծ ոչ նախանձ.
Զի մեծ ՌԱ.ԺԹԻՒ թարգմանուած վէպեր
Նախապէս շատին սիրտն էր գրաւեր:

Թափարն զկայ առաւ գարձեալ՝ մրգավաճառ փողոցին,
Ուր աջ ու ձախ խնկոց սեղան՝ ճրագարանք փայլէին.
Բարձանց կապած փնջոց կամար՝ դափնեայ պսակ իւր միջին,
Ընդ հովանեաւ հանգիստ տուխն քաջ Քերթողի Դագաղին.
Դագաղն 'ի հանգիստ՝ ամբոխն 'ի տանիս,
Որոտման ձայնով՝ լալիս են լալիս:

Բայց, որ աւսող, բացուեց շուտով գերեզմանին տեսարան,
Երբոր թափարն եկաւ հասաւ Խոջի վանաց մեծ դրան.
Ուր յայտնեցան մեծ Քեր թողին գնահատող պսակներ,
Ուր խումբ առան նոցա բերող՝ մէն պսակին զոյգ ընկեր.
Կարծես զօրախումբ գունդեր կազմեցան,
Կոռել անողորմ գէմ գաժան մահուան:

Դու հոգետես Մուզայդ Հայոց՝ տես 'ի բարձանց այս վայրում,
Տես ինչ անցքեր կանցնին արդեօք՝ մեռեալների խոր շիրմում:
Արդեօք տրտում թէ բերկութեամբ ամինք Հայոց կրխայտան,
Հիւրասիրել յոգնավաստակ Քերթողի Դին 'ի գամբան:

Բայց ով չի զգար՝ որ մեռեալք անդամ,
Յանկան, որ քերթողք ապրին յարաժամ:

Խոր տիրութիւն տիրեց յանկարծ՝ մահաշիրմին եզերքով,
Երբոր տեսան շրջապատած բարձր կամար վեհ դիւքով.

Եռաշամափայլ վարդափնջիկ գափնի թփեր գալարուն
Կարծես սառած ցուրտ Դիակին ողջագուրեց նոր գարուն:
Եւ ջուրջ կամարին առանձին գրուած
Վ. է պերի անունն՝ ծաղկանց մէջ գրուած:

Ուր խճուեցաւ թափարն ամբողջ՝ սլարագլուխ կղերներ,
Մին պսակին՝ մին մին ընկեր, գաս գաս կանգնած առ ընթեր.
Հնչեց նորից տիրուր ողբը՝ ամբոխն առաւ լաց ու կոծ,
Ոչ ինչ աղէտ եւ ինչ սարսափ՝ դնել ՌԱ.ՖՖԻՆ հողի ծոց.

Եւ ո՞ր սիրտն անդուժ պիտի յանդգնէր,
Գիտութեան գանձը հողի տակ ծածկէր:

Թէպէտ մահուան անդուժ ձեռքը չուզեց նրան խնայել,
Բայց ամբոխին խիստ գժուար էր իւր Քերթողից բաժանուել.
Կարծես մահը մինչեւ անդամ կըսարսափէր այս պահուն,
Երկինք երկիր տրտմել էին՝ հասարակաց գորովոյն:

Բայց թէ հասել էր՝ վերջին սեւ վայրկեան,
Արտառնքն աչքերին վիխուել էր արեան:

Ավակայն, ինչպէս զեփիւռն յանկարծ՝ իւր հեղաբոյր համբուրով,
Հրատոչոր այրած սրտին սէր կըծորէ ու գորով,
Սյնպէս յանկարծ, մեծ Քերթողի կենապրոթիւնն հնչեցաւ,
Որոյ ձայնից ամբոխն յուզեալ՝ նորից ոգի շոնչ առաւ:
Լոեց ամբոխը՝ լսել կարճ կեանքին
Բիւր հազար բարիքն մատուցած ազգին:

Դրուատեցին եւ այլեւայլ՝ կարճ, բայց ազդու ներբողներ,
Ինչ որ տոկուն վսեմ հոգին իւր ձեռքովն էր վաստակեր:

Հորդան տուեց գոռաց ամբոխն «վերջին համբոյր ու բարեւ»,
Որ հրաժեշտի վերջին ցողով՝ նորից գրկէ իւր Ա. թ եւ:
Որ անշքացած անխօսուն դիակ,
Հանգել էր, հանգել, ՌԱ.ՖՖՈՒՆ արեգակ:

Աւագերեցն օրհնեց հողը՝ գրին ՌԱ.ՖՖԻՆ գերեզման,
Գոռաց ամբոխն «աւաղ մեռաւ. մեռաւ Որ գիդ Հայաստան»,
Կարկամեցաւ ամեն բերան, սառած աչքեր արտօսին,
Խեղդուկ հառաչ, խուլ հեծեծամք միայն լսուէր ամբոխին:
Ծածկուեց ՌԱ.ՖՖԻՆ սեւ հողին տակավ,
Կորոյս Հայաստան գիտութեան գորով.
Իւր ընտիր Երկեր մնացին միայն
Յիշատակ եւ գանձ ազգին յակուեան:

Տիսուր ժամեր շատ սահեցան՝ մեծ ամբոխի վերայից,
Որոնք կարծես արբուած էին՝ մահուան զօրեղ բաժակից.
Ոմանք ՚ի թէկ գլուխն ուսին, ոմանք ձեռքերն ՚ի ծոցին,
Սյլք՝ խոր փոսին աչք սեւեռած, այլք՝ ցիր ու ցան նատէին:
Մինչեւ որ փոսը յագեցաւ հողով,
Հոգին էլ երկինք թռաւ թեւերով:

Զկար ՌԱ.ՖՖԻՆ, ոչ իւր գագաղ, ոչ սրտակիցք, ոչ թափ օք,
Միայն անձրեւն էր որ ցողէր՝ հողաբուրն այն տիսուր,
Սյն եւս ամբողջ ծածկուած էր հարիւրաւոր պատկով.
Կարծես ոչ նոր՝ այլ գարաւոր բուրգ էր պատած թփերով:
Գնա դու ամբոխ, գնա վշտաբեկ,
Այլ մի յոյս գներ Քնարին բեկ բեկ.
Ինչ որ Նարգեց, ինչ որ Նարեց,
Բաւ է քեզ համար, գաս, խրատ շատ մեծ.

Թուիր արագ յորդ Երասմիի կենսապարգեւ ափերից,
Մինչեւ համիս Նախիջեւան պատմէ Հայոց քո վշտից.
Ասա մեռաւ Հայ Ք ե թ ո զ ը, որ իւր ազգի նոր կեանքից
Կուզէր ծնջել նոր մուտ գործած ամեն կեզծերն օտարից:

Մեռաւ նա, մեռաւ, բայց «Խ ա չ ա գ ո զ ի
Յիշատակարան» մնաց միշտ քաղցրադիւ:

Խորենացւոյ ներդաշնակով՝ Հնյէ քնարդ՝ ի հիւմիս,
Արիւնաներկ Սիւնեաց երկրին գուժէ մահը Ք ե թ ո զ ի ս.
Վերջին դարուց Հայ դիւցաղանց տես շիրմներ ու վայրեր,
Տես ու ողբա, որ Ք ե թ ո զ ը բոլոր անցքերն է գրեր:
Թող որ սուկ առնեն Սիւնեցի Հայեր,
Կարդան «Խ ա մս ա յ ի մէ լիք ու թիւններ»:

Ի պարսկահայք՝ տես անդ Սալմաստ, որտեղ ծնաւ մեծ ՌԱ.Ֆֆին,
Ուր մեծացաւ կայտառ մանուկ՝ ուր արձարձուեց սէր սրտին.
Ախ, անցեալին յիշատակաւ՝ Հայրենակցացն սփոփէ,
Իւր հարազատ երկու որդոց՝ Հայրենիքից կեանք ինդրէ:
Որ Հօր հանճարով նոքա մեծանան,
Լինին արժանի Հօր վսեմ անուան:

Եղիշէի սուրբ գորովով՝ երկրապագէ Արտազին,
Ուր վարդ բացուի արեան գունով, Հայ սոխակն էլ իւր մօտին.
Ուր փշրուած սոկերք Հայոց լոյս կը ցայտեն մէջ թփոց,
Ուր հազարներ մեր սուրբերից քաղցր ննջեն հողի ծոց:
Ասա, որ «Դ ա ւ ի թ ք է կ ի» պատմութիւն
Գրեց Քերթողը քաջացդ համանուն:

Անդէն ձայնիդ՝ քեզ հրաւէր կը տայ Տոսպին մեծ ծովակ,
Անցնել խաղաղ իրեն ալիք՝ գէպ Աղթամար սուրբ գղեակ,
Ուր Ք ե թ ո զ ը Ե ր կ ն անդրանիկ անդ է գրել հոգեկառ,
Համբայր ծոցին, համբոյր Սեմոց սուրբ Տաճարին սուր եւ առ.

Բ.

Պոկ դու Մուզայդ ինձ վշտակից՝ փութա համնել Հայաստան,
Հնչէ քնարդ, հնչէ տիսուր, լեռներ ձորեր թող ողբան.
Դիւցաղնագործ աւերակաց տուր արձագանք թէ մեռաւ,
Իրենց սիրով սիրահարուած Ք ն ա ր ն անմահ բեկրեկաւ:
Թառամած երկրին անթառամ փառքեր,
Ն ա է ր, որ ուրախ ու տիսուր կերգէր:

Հարսին լուսոյ Շողակաթին՝ (*) երկրպագէ ջերմագին,
Յանձնարիէ Շողակաթով՝ գգուել իւր ծոց ՌԱ.Ֆֆին.
Խնդրէ տանել իւր առագաստ՝ ուր սուրբ Քերթողք Հայկազեանց,
Միշտ հոգեբուխ նուագներով՝ օրհնեն Փեսայն լուսապանծ
Խնդրէ Սրբագոյն Վեհ Դիտապետին,
Իւր Լուսազարմօք միջնորդել Փրկչին:

Վաղարշապատն անց գու յայսկոյս, տես Երեւանն անդրանիկ,
Պատմէ Հայոց, որ մեծ ՌԱ.Ֆֆին յանկարծ թռաւ գէպ երկինք.
Թող մորմոքան քանի կարդան վէպն «Ո ս կ ի ա ք ա ղ ա ղ»
Թէ աքաղաղն ինք ձայն չունի, մարդիկ երգեն ողբ ու տաղ:
Տառապեալ սրտից միխթարն անբաւ,
Չը կայ ՌԱ.Ֆֆին թռաւ ու թռաւ:

(*) Էջմիածնի ՄԱ.ՅՐ ՏԱ.ՅՐԻՆ է ակնաբեռն և ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ և
ՀԱՅՈՑ ՀՈԳԵԿՈՐԱԿԱՆ դասուն:

Տես անդ գու խցիկ Ք երթ ողին նստած,
Ուր խոնջեալ ճակախց քրառանքն են թորած:

 Եւ փութապէս ծաղկոտ գաւառ՝ տիսուր վայրերն աւերակ,
Երջահայեաց աչքով դիտէ՝ յիշէ քրդաց ջարգն անյագ։
 Անդ խոր ձորոց եւ վիմաց մէջ՝ կան շատ ազնիւ նահատակ,
Որոց համար Ք երթ ողն ունի «Խ ենթը» գրած յիշատակ։
 Զայն տուր մեռելոց եւ ձայն ծաղկոտին,
Թող որ սուգ առնեն մահուան Ք երթ ողին։

 Անդ այցելու ել գու լերանց՝ ուշիկ քայլէ դիտելով՝
Թող ոլորսին քո ոտքերին կակաչ կարմիր բիւր ծաղկով.
 Անդ ցիր ու ցան տես քարակոյտ եւ բանակի մեծ որջեր,
Ուր քրդերի մեծ բանակով Զալալէդդին կը նստէր։
 Յիշէ գու այնաեղ, յիշէ մեր ՌԱ.Ֆֆին,
Յիշէ, որ ունի վէպ «Զալալէդդին»։

 Գնա փութով բարձր Հայոց՝ իմ Հայրենի սուրբ աշխարհ,
Ել ՚ի Տարօն, տես Խնակեան՝ հնչէ լարերդ վշտահար,
Մուտ Սշտիշատ՝ գրիէ շիրիմ սուրբ Սահակայ սիրակաթ,
Տես այն վայրեր, ուր մանկութին սուրբ Հօրն աճէր անընդհատ։
 Բիւր հազար համբոյր տուր Հօր սուրբ շիրմին,
Սնա, որ մեռաւ Ք երթ ողն ՌԱ.Ֆֆին։

 Անա, մեռաւ, որ Զեր կենաց տիսուր դուտրթ անցքերին,
Ումերգարուն Քերթողաց մէտ տուաւ աւին կաթոգին։
 Մուրբ Մեսրովայ որտին գորով՝ եռանդն հզօր Պաթեւիդ,
Վրէժն արգար, որ կարծարձէր Սամուէլին քաջասիրտ։
 Բայց մեռաւ աւանդ, կիսաւարտ մնաց,
«Սամուէլ» վէսլը գեռ աւարտ չառած։

 Երբ հեռանաս Եփրատ, Տիգրիս, Փիսոն գետոց ափերից,
Սրագ թռիր Պարիսար, Կորդուաց եւ Մոսկվիկեան լեռներից,

Մաղթէ սրտով՝ որ Վարագայ՝ Ք երթ ողն (*) ապրի շատ երկար,
Եւ կուսին եան (***) մնայ յաւէտ խեղճ Տօրոսին մխիթար։
 Ողջունիր իրենց՝ երբ Վասփորն անցնիս,
Պատմէ ցաւագին մահը Քերթողիս։

 Թանգ կորստեան Հայ Քերթողին՝ Հայ աշխարհին շուրջ բոլոր՝
Թեւակոխէ ամեն մի վայր, գուժէ մահուան սուգն այսօր.
 Ուր քողարկին ամիւնք սուրբ Հարց՝ աւերակաց մէջ տիսուր,
Ուր միշտ կոծէ բուն գառնապէս՝ մեր վշտերից առնել լուր։
 Այս, թող կոծէ այդ գուժկան թոշնիկ,
Քանի որ հաշտ չէ մեզ հետ սուրբ երկինք։

 Անցիր շուտով ծովեր ծոցեր՝ կաց կէս օրին Կիլիկեայ,
Զերմ արտասուք ցողէ շիրմին՝ Նորհալւոյն գերագահ.
 Նսեմացած սուրբ աշխարհին Խուբինեաց քաջապանծ,
Տուր քո ողջոյն սերգ համբուրով՝ երկրպագէ սուրբ շիրմաց.
 Ասա անձկայրեաց մեռաւ Մեր ՌԱ.Ֆֆին,
Զեր սուրբ աշխարհի քաղցրանոյշ տեսպին։

 Թո՞ղ ալետանջ ծովին ափունք, Քաջ Սրամին ել սահման,
Ուր Սրամեանք խեղճ ու թշուառ՝ տանջին սովից անսահման.
 Գիտես արգեօք ինչ կը գրէր, թէ Ք երթ ողը ողջ մնար,
Քանի հազար ձեռքեր սաստար, կը տար նոցա մխիթար։
 Բայց աւանդ մեռաւ վշտակիցն ազգին,
Մեռաւ իւր հանձար՝ օգուտն էլ գրչին։

 Տես աջ աչեակ քաղաք, աւան, գաշտեր, մարգեր կան անբոյս,
Ուր մշակներ ձեռքեր ծոցին՝ նստած թափեն արտասոււ.
 Ուր մարբ, մանկումք վշտամբունջ՝ ողբան հարսներ եւ աղջկունք,
Ուր ժանտամահ սովն անխնայ՝ փակեց անմարդ շատ գրունք։

(*) Խրիստոս ՀԱՅՐԻԿԻՆ և
 (**) ԼՈՒՍԻՆԵԱՆ Խորէն ՍՊ.Ե.Խպիսկոպոս Նար.Պէյլն } է ակնարկում Ման. չ.

Բայց աւաղ մեռաւ ՌԱՖՖԻԻՆ գորով,
ԳԵՂ նոյցա վշտերն ամրէր գրչով:

Մի զանց առներ Պոնտոսին Հայք, ուր դեռ մնան կարօտով,
Ուր նետն Հզօր Սրտաշէսին՝ հրաշք գործեց կոթողով.
Ժամանակին մաշող ձեռքը՝ փշրէ զլոթողն ամեն բան,
Բայց Քերթողաց գըքերն անմահ առնեն յաւէտ նոր շրջան:
Կը մնան նա եւս՝ իմ այս Քերթողին
Գործքերն էլ անմահ ցվերջ աշխարհին:

Դէմ յանդիման ել Բիւզանդեայ՝ մինչ Եւրոպայ տար այս բօթ,
Ուր բիւրաւոր Հայք անխորհուրդ՝ ցարդ պանդխտին անծանօթ.
Կայծակնահար զարկ ու շանթէ տխուր սրտեր նոյն Հայոց,
Ասա «Կայծեր» գրող ձեռքերն այսօր դրինք հողի ծոց:
Ասա մեռաւ նա, մեռաւ սրտատանջ,
Կարօտով պանդովստ Հայոց հոգետանջ:

Թող, որ տանի զեփիւռն անոյշ՝ ողբիդ նուագ ծովին թումի՝
Դպինետիկ եւ ՚ի Վեննայ, ուր Քերթողաց կան ակումբ.
Որ ՚ի պատիւ մեր Քերթողին, ոչ լոկ պսակ կամ արձան,
Այլ վեհ Հայրեր թող որ հիւտեն անմահ տառիւք մահարձան:
Մաղթէ գու նոցա, մաղթէ կեանք երկար,
Որ սիրով ազգիս ապրին դարէ դար:

Վերջալոյսին վերջին լուսով՝ քերէ ափունք Գանգեսին,
Մինչ Ամազոն թուիր արագ, տես տարագիր Հայերին.
Վշտապատում եղիր նոցա՝ բիւր ցաւերից քո տեսած,
Ասա մեռաւ անգիւտ ՌԱՖՖԻՆ՝ Զեր կարօտով անձկայրեաց,
Մեռաւ, բայց թողեց՝ Զեղ այս սուրբ կտակ,
«Հայեր, ուր երթաք՝ դարձեալ տուն գառնաք»....

Ասա, թող կարդան Քերթողիս «Փունջեր»
Նոցանով անցնեն իրենց սեւ օրեր:

Հիւսիսափալին իւր բոցերով՝ լոյս կը սփուէ քո ուղարձ,
Դու փութապէս եկ Պեղքըուրի՝ գուժէ մահը ՌԱՖՖՈՒՆ.
Ուր Հայ Որեարք կը գեգերին Աթենական փափագով,
Ուր Պատկանեան Քերթող Հայրը՝ ցարդ կը ժուժէ քո սիրով:
Վշտակից եղիր՝ Որեարց եւ սուրբ Հօր,
Խնդրէ Հօր Որդոց՝ կեանք, արեւ, շատ օր:

՚ի Մոսկուայ լեր վշտակից՝ մեծ հըռաետոր Էմինին,
Որ ալեւոյթ իւր կենաց մէջ՝ աւաղ, կարոյս սիրելին.
Դու անսպառ միշտ կեանք խնդրէ՝ վեհ Լազարեանց մեծ տոչմին,
Նոյնը նոյնաղէս Սանասարեանց՝ ազգապարծանք Իշխանին.
Որպէս զի երկինք Սոցա սաներից,
Պարգեւէ մեզի քերթողներ նորից:

Տես ՚ի մահճին՝ աւաղ, հիւանդ՝ եւ Յովնանեան Վեհազանին,
Որ իւր անձից շատ առաւել՝ միշտ սիրել է Հայ ազգին.
Դեռ կը խորհի իւր ցաւոց մէջ՝ վերջին բարիք ընձեռել,
Որը եւ անտէր թշուառ մանկանց՝ կեանք եւ արեւ պարգեւել:
Սրբէ Վեհ Սրտին քրտնակից ճակատ,
Երկնից սուրբ կամաց յանձնէ իւր վիճակ:

Դարձիր Տփիսիս, ՚ի տուն՝ այրի, վշտաթախիծ Ամուսնոյն,
Քառասուն օր լեր սգակից՝ նորա ամբաւ ցաւերոյն.
Հնչէ լարերդ, Հնչէ տխուր բաց ու կարդա իւր Աւագեր,
Նոցա վսեմ սուրբ նիւթերից՝ յօրինէ քեզ նոր ողբեր:

Եւ կարդա՝

«Վրացիշխանազն Ալեքսանդր», կարդա,
«Գաղտնիք Ղարաբաղի» կարդա ու կարդա.
«Ուղեւորութիւն Պարսկաստանում» տես,
Կարդա լռելեայն ողբա դառնապէս:

Ողբա կոծելով՝ բոլոր գրածներ,
Սրտաւոք լուա՝ Խցիկն իւր անտէր.
Ողբա գեռ աւարտ չառած նոր վէպեր,
Եւ կամ մամուկն անտես կտակներ:

Ողբա, համբուրէ մին մին թերթիկներ,
Ողբա տաղանդը՝ եւ գրող ձեռքեր.
Ողբա վշտակէզ՝ բոլոր ողբերով,
Ողբա, արտասուբ՝ գլխիդ վայ տալով:

Շատ գարեր պէտք է, որ նորից ծնի,
ՌԱ. Ֆթիի նման մեծ մարդ յարգելի,
Կորցրիր աւաղ, կորցրիր զնա,
Մինչեւ գտնելոր ողբա միշտ ողբա:

Բայց հերիք մաշես՝ քնկուշ սիրտ Այրւոյն,
Գգուէ ու սրբէ աչքերն Որբ Մանկտւոյն.
Ահա քառասունքն անցաւ դառնաղէտ,
Որդիքն ու Այրին առ տար քեզի հետ:

Տար շիրմին ՚ի տես՝ ցանկալի հողին,
Թող որ համբուրեն՝ փարեն կաթողին.
Վերջին ողբ, հոգւոց կարդան ու ողբան,
Նորից հրաժեշտ տան ու հեռանան:

Մինչեւ որ տարին առնէ իւր շրջան,
Նորից բեր, տեսնեն Քերթողին արձան.

Գ.

Կարդա ողբալով՝ «Ղարիբ Մշեցին»,

«Պարոյր Հայկազն» եւ նոցա ոգին:

Կարդա վշտագին «Սով», «Կուսագրութիւն»

Ընդօրինակէ մէր ու սուրբ աւիւն:

Կարդա «Կայենի կտակը» նոյնպէս,

Եւ «Ղարաբաղի աստղագետը» տես.

Կարդա վշտաբեկ «Անքաղդ Հռիփսիմէ»,

«Բիբի շարաբանի» կարդա ու զննէ:

Կարդա «Հայկինը», կարդա եւ «Բառեր»,

Կարդա ոգելից նոյնպէս «Խաղփուշը».

Կարդա փափաքով դու արտասուալից,

«Միքանի գծեր Խորիմեանի կեանքից»:

«Միքան Մելքումիան» կարդա, իմացիր,

«Ազթամարայ վանքը» տես ու հիացիր.

«Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» կարդա,

«Քրաց միութիւն» կարդա ու ողբա:

«Մտրդը գոյութեան կոռւիմէջ» յիշէ,

«Քրդեր» եւ «Քնար Մշեցոց» քննէ.

«Միօրագար հող», «Քանդուած օջախ»,

Կարդա եւ կրկնէ ախ, հառաջ, աւաղ:

Թող նորից կոծեն՝ նորից ողբ, հոգւոց,
Եւ միշտ այցելեն՝ երբ գայ մեռելոց:

Իսկ դու սփոփիչ լեր Այրւոյն թշուառ,
Նորա Որբ Որդոց կաց միշտ միշիթար.

Նոցա խնամքը յանձնէ Արարշին,
Բայց դու լեր հսկող իրենց վիճակին:



Ավելի հայուսանի պայման աքրայ
Առաջնու մզօրուի շատ ով ուսուած
Այսուու ուսուած քայ շատ ով ուսուած
Եւ այսուու ուսուած ուսուած ուսուած

Պ.
Ակէ միշտ նոյնպէս շիրմին դու ընդհուպ, ու
Անձկայրեաց հոգով լինել պահապան.

Մասրսի ցողով ծաղկունք, վարդ ու թուփ,
Աճեն քո ձեռօք՝ հովանի նորան:

Զեփիւռն էլ անոյշ քնարիդ ձախով
Ազնիւ ոսկերաց թող կարդա օր օր.
Սիրահար հոգին զուարթնոց թեւով,
Պարէ շուրջ շիրմին՝ խնդայ ամեն օր:

Սահուն գարերը՝ թող գան ու երթան,
Տեսնեն մշտապէս քեզ պահակ շիրմին.
Եւ Հայկեան թոռներ այցելու երբ գան,
Փութան նորոգել դափնիք արձանին:

Անմահ կը պահէ ժամանակն յաւէտ,
Նորա անմոռաց մեծ անունն անմահ.
Նա եւս անմահ՝ իւր գրքերի հետ,
Որչափ որ արեւ ծագի եւ լոյս տայ:

Առխակներ լալով՝ վարդին թառամած,
Երգելու թող գան իրենց ալելուն.
Այլ եւ բիւրաւոր թռչունք Հայրենեաց,
Նոր մեղեղիով երգեն միշտ անքուն:

Եսպէս բարիք վաստակած անձին,
Լիառատ կը տայ Լիազօրն Աստուած.
Հեր եւ դու վատահ Մուղայդ վշտագին,
Ինչ հաւատ, ինչ յոյս, որ ունիս պահած:

Տիտուր օրերդ այժմն եւ ապայն,
Ինքդ լաւ գիտես, որ պէտք է անցնին.
Ռոպէն երբոր գայ մեռեալներն համայն,
Հոգոց աեսութեամբ նորոգ զարդարուին:

Ես էլ նոյն յուսով՝ քեզ հետ կը մնամ,
Մինչեւ իմ կենաց վերջին օրերը,
Եղիշէի պէս՝ կոծեմ եւ կողբամ,
Ազնիւ Հայերի թանկագին մահը:

Սուազ օրերս երբ համնին աւարտ.
Կերթամ հոգի ծոց հանգիստ կը ննջեմ,
Ան սուրբ յարութեան օրերին զուարթ,
ՔԱՓՓԻՒՍ հետ բոլոր՝ Նախնիք կը տեմնեմ:

Նոյն յուսով եւ դու ցվերջ աշխարհին,
Երանեալ Մուղայդ՝ հսկէ Հայ շիրմանց.
Ցողով աչքերիդ ուռոգէ նոյին,
Բնապէս օրհներգող՝ պահող սուրբ Մասանց:



ՔԱՓՓԻՒՍ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՔԱՓՓԻՒՍ ՅԱԿՈՎԵ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈՎԵՍՆԸ ծնուեց 1835 թուականին, Պարսկահայոց նահանգի Հեր եւ Զարեւանդ գաւառի՝ այժմեան Սալմաստ քաղաքի Փայշջուկ գիւղում, նահապետական գերդաստանի՝ ազնուասիրտ բարի ծնողներից:

Հայրենիքի մէջ ստացաւ նա՝ մայրենի լեզուի նախակրթութիւնը: 1850 թուականին, Հայրը Տիփիս բերեց Նրան՝ Մայրենի լեզուի բարձրագոյն գիտութիւնները սովորելու համար: Աշխատասէր աշակերտը կարճ ժամանակամիջոցում՝ Հայկաբանութեան մէջ մեծ յառաջադիմութիւն ցոյց տալով՝ ցանկանում էր արտաքին գիտութիւններ եւս ստանալ եւ Ուուերէն սովորիլ: Հայրը կատարեց որդու բաղձանքը եւ տուեց գեմնազին, որի դասերին հետ զուգընթաց շարունակում էր Հայերէնը եւ միշտ անյագաբար կարդում էր Հայոց հին եւնոր մատենագրութիւնները, այն աստիճան զգացուած եւ եռանդով՝ որ շատ անգամ ամբողջ գիշերները լուսացնում էր, երբէք ցմուաբերելով վնոյ ժամերն եւ հանգստութեան վայրկեանները: Այսպէս, չափազանց աշխատութիւնից հետեւեցաւ նօրաանձին տկարութիւն եւ սոէպ սոէպ աչքի հիւանդութիւն:

Ընթերցասիրութեան եռանդը՝ որչափ որ օրից օր մզում էին Նրան շուտափոյթ հանգէս գալ գրականութեան ասպարիզում, այնքան էլ առաւել ընտանեկան հոգսերը եւ պատահական ձախորդութիւնները ստիպում էին կիսաւարտ վերադառնալ Հայրենիք, որտեղ հարկաւոր էր նորից վերականգնել պարսկական ատելութիւնից տուգանքի ենթարկուած եւ այլ հանգամանկներից վնասուած՝ հայրենական գերդաստումը եւ առուտուրը:

Այս առթիւ, 1856-ին վերադարձաւ Հայրենիք եւ սկսեց վաճառականութեամբ պարապել, որով էլ, երբեմն Պարսկաստանի այլ եւ այլ գաւառներում, երբեմն էլ, Թրքահայոց մերձակայ սահմաններում ճանապարհորդում էր:

Այս բարեպատեհ ճանապարհորդութիւնը կարծես մի նոր ոգի ներշնչեց եռանդու երխոսասարդի բնաձիր զգացմանց վերայ, որտեղ որ գնում էր՝ մանրամասնօրէն քննում էր տեղացի ազգայնոց վիճակը, նոցա սովորութիւնները, բնակած վայրերը եւ հանգիպած աւերակները, եւ ինչ բան որ տեսնում էր ու լսում՝ կարծես մի առ մի գրում էր իւր սրտի տաղտակների վերայ, որոնց ազգեցիկ ներգործութիւնից՝ առաւել մեծ վաստակ եւ պաշար էր վերցնում՝ քան իւր նիւթական առեւտուրից:

Վերջապէս ժամանակը մօտեցել էր եւ ահա յանկարծ ծագեցաւ նորա աստղը Պարսկահայոց մուայլ ամպերի տակից՝ Կովկասի նոր լուսաւորուած հորիզոնի վերայ:

Մելիք-Յակովեան կրկին Տփխիս վերադարձաւ վաճառականութեան պատրուակաւ։ Բայց այս անգամ փոխանակ վաճառք-ների՝ բերել էր բազմաթիւ ձեռագիր մատեաններ՝ այեւայլ նկարագրութեամբ լիքը, որոնց իրագործման համար՝ կարծես մի խաղաղ տեղ էր որոնում. . . . մանաւանդ որ նիւթական օժանդակութեան եւս կարօտ էր՝ իւր նորածին երկասիրութեան կեանք եւ արեւ տալու համար։

Բայց ով պէտք է օժանդակէր նրան, եւ ամչափ ամբարտաւան համալսարանականների գէմ կանգնած ինքնառւ գեղջկական մատենագրին վերայ ով կարող էր հաւատ լնծայել, եւ կամ որի մոքից անցնում էր, որ Սալմաստի հաշուապահի մօտ գրականական գանձեր կան, եւ ով կարող էր երազել, որ Դա Հայոց ներկայ դարի մի մատենագիրը պէտք է հոչակուի, եւ ապագայում ընդհանուր համակրութիւն պէտք է առանայ իւրաքանչիւր բարձր ուսում առացած համալսարանականներից եւ մինչեւ անգամ օտար եւ Եւրոպացի ազգերից եւ նոցա գիտնականներից։ Սրդարեւ ոչ ոք չէր հաւատում, եւ թէպէտ աչքով տեսնողներ էլ եղան, բայց նիւթապէս օժանդակող ոչ ոք չը գտնուեցաւ, որից էլ երկար ժամանակ մատենագիրը մնաց հաշուապահութեան մէջ։

Այս սահմանափակ շրջանից զատ, մի քանի տարի ուսուցութեամբ պարապեցաւ Թալիրիզի եւ Ագուիսի Հայոց դպրանոցներում։

1860 թուականին հիւրասէր «Հիւմիսափայլը» իւր էջերի մէջ հիւրընկալեց Մելիք-Յակովեանի անդրանիկ երկը եւ լոյս բերեց «Ա. Ղ Թ ա մ ա ր ա յ Վ. ա ն ք ը» վերնագրով գողտրիկ վէպը։

Ընթերցողները գերազանց գոհունակութեամբ կարգում էին յիշեալ հրատարակութիւնը, որից հեղինակը խրախուսուելով՝ «Փունց» անունով վէպերը եւս փոխառութեամբ տպել տուեց, որոնք մեծ յարգանօք ընդունուեցան իւրաքանչիւր դասակարգի Հայերից։

1871-ին Պ. Գրիգոր Արծրունին թոյլտութիւն ստացաւ «Մշակը» հրատարակելու. Մելիք-Յակովեանը դիմեց նորածին «Մշակի» մեծ. Խմբագրին, յայտնեց իւր տենջանքը, բացեց իւր սրտի անգիր քարտէզը, ցոյց տուեց իւր հոգեկան զգացմանց կատարելութիւնները, ինդրեց մամրոյ օժանդակութեամբ՝ ի լոյս բերել նրանք, եւ նրանցով մկրտել մուայլ մոքերի անտարբերութիւնը եւ տգիտութեան կեղուր։ Երիտասարդ Խմբագրիը կարծես բնազդմամբ, յարգանօք եւ սիրով ընդունեց ինքնառւ մատենագրին՝ իւր համալսարանական կատարելագործած գիտութեան առաջ, գահերեց նստեցրեց նրան, տուեց իւր ծրագրի ուղեցոյցը եւ բացեց լնդարձակ ասպարէզ նրա առաջ։ Այս բարեպատեհ ցանկալի ասպարիդում՝ սկսեց Մելիք-Յակովեանը իւր մատենագրութեան աշխատութիւնը, սրեց գրչի խոփը, հերկեց իւր մոքի անդաստանները, բացեց իւր խելքի հանճարեղ ամբարները, գուրս բերեց իւրաքանչիւր եղանակի յարմարագոյն սերմնահատիկներ եւ ծաղկաբոյսեր՝ առատութեամբ ցանեց ու տնկեց նրանց «Մշակի» ծաւալ էջերում, որտեղից էլ բեղմնաւորած հնձեց, շտեմարանելով Հայկական մատենագրաբանում՝ իւրաքանչիւր դասակարգ Հայերի համար մտաւոր անսպառ պաշարներ։ Այսուհետեւ Մելիք-Յակովեանը ընդպարագութեցաւ «ԲԱ. ՖՖԻ» մակ անուան տակ։

Ընթերցողը ափի՝ ի բերան զարմանում էր այս նոր հռետորի վերայ. նախանձը, ատելութիւնը գրգռում էին ամեն մի համալսարանականներին «ղիմքը գիտէ սա զգիրս, զի ուսեալ բնաւ զիք», ասում էին ուսումնագէտները, հետաքրքրվում էին օտար ազգաց գիտնականները նոյնպէս եւ զարմանում, որոնք սկսեցին թարգ-

մանել տալ նորս վէպերից՝ Ասիական եւ Եւրոպական լեզուներով։
 Նա (Րաֆֆին), որ քիչ առաջ Հայոց շրջաններում դեռ ուսումնական կոչվելու պատիվը յտնէր. յանկարծ օտարներից՝ բանաստեղծ, վիպասան, պատմաբան եւ մատենագիր կոչուելով հըռյակուեցաւ, եւ հետզետէ նորա աստղակայլ անունը համեմատութեան ենթարկուեցաւ լուսնի պայծառ անուան հետ. Բայց վաստակասէր Մատենագիրը ոչ պարսաւելուց վհատեցաւ եւ ոչ գովաբանուելուց մեծամտեցաւ. այլ անխոնջ աշխատում էր իւր հեղինակովմիւնների տեսակները բազմացնել եւ ընթերցողների սիրտն ու հոգին համերաշխութեամբ կապել նոցա վսեմ գաղափարների հետ. ոչ միայն ընտիր ընտիր վեպերով եւ պատմական նկարագրութեամբ, այլ առօրեայ հարցերին համար եւս յէր դադարում փիլիսոփայական յօդուածներ նովիրել, եւ բացի «Մշակից» եւ բացի «Րաֆֆի»՝ «Մելիք զադէ», ստորագրութեամբ եւս յօժարակամ աշխատակցում էր ազգային այլեւայլ լրագրներին։

Թողնելով նրա բազմաթիւ հեղինակովմիւնները, մենք այստեղ առաջ ենք բերում տառական կարգով մեզ ծանօթ մատենագրովմիւնները միայն. որոնցից շատերը պարբերական հրատարակութիւններում մնալով ցարդ եւս զրկուած են առանձին գրքեր կազմուելուց. նոյնպէս յայտնում ենք եւ այն հեղինակովմիւնների անունները, որոնք իւր մահուանից առաջ պատրաստել էր՝ ի լոյս ընծայելու։—

«Աղթամարայ վանքը» նկարագրական վէպ,
 «Անբաղդ Հոխիսիմէ» վիպական նկարագրու-նի-ն,
 «Բառեր» (թարգմանովմիւն) բանագովեղու-նի-ն,
 «Բիրի շարաբանի» կենուագրական վէպ,
 «Գաղտնիք Ղարաբաղի» կըտիկա,
 «Դաւիթ բէկ» երկու հատոր, պատմական վէպ,
 «Երկու ամիս Սիւնեաց աշխարհում» յեւագիր,
 «Զահրումար» (Թիֆլիսի կեանքից) յեւագիր,
 «Թիւրքիայի Հայոց վիճակը» հրադարակախօսական,

«Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» ճանապարհորդական նկարագրու-նի-ն,
 «Թողոմներ» (Հայ ուսանողների կեանքից) յեւագիր,
 «Խնչ կապ կայ մեր եւ թրքաց Հայերի մէջ» հրադարակախօսական,
 «Խաղ-փուշեր» վիպական նկարագրու-նի-ն,
 «Խամացի Մելիքովմիւններ» պատմական վէպ,
 «Խաչագողի յիշատակարանը» նկարագրական վէպ,
 «Խենթը» վիպական նկարագրու-նի-ն,
 «Կայենի կտակը» (թարգմանովմիւն) վէպէնէր,
 «Կայծեր» երկու հատոր,
 «Կուսագրովմիւն» վիպական և կենուագրական,
 «Հայ երիտասարդովմիւնը» հրադարակախօսական,
 «Հայ կինը» հրադարակախօսական,
 «Ղարաբաղի աստղագէտը» (թարգմանովմիւն)
 «Ղարիք Մշեցին» վիպական նկարագրու-նի-ն,
 «Մարդը գոյութեան կուոփ մէջ» հրադարակախօսական,
 «Մի թերթ աբեղայի յիշատակարանից» յեւագիր,
 «Միրզա Մելքումիւն» կենուագրական նկարագրու-նի-ն,
 «Մինը այսպէս եւ միւսը այսպէս» Թիֆ.Հայերի կեանքից յեւագիր,
 «Մի քանի գծեր Խրիմեանի կեանքից» կենուագրական նկարագրու-նի-ն,
 «Մի օրավար հող»,
 «Ոսկի աքաղաղ» նկարագրական վէպ,
 «Ուղեւորովմիւն Պարսկաստանում» նկարագրու-նի-ն,
 «Պարոյր Հայկազն», պատմական վէպ,
 «Զալալ-Եղիշին» կենուագրական վէպ,
 «Սալբի» երեք հատոր. յեւագիր,
 «Սամուէլ» երեք գիրք, պատմական վէպ,
 «Սով»,
 «Վրաց իշխանազն Ալէքսանդր» պատմական վէպ,
 «Փունջեր» երկու հատոր,
 «Քանդուած օջախ» կըտիկա,
 «Քնար Մշեցոց» կըտիկա,
 «Քրդական միովմիւն» հրադարակախօսական,

Նոյն օրը ազգային հաստատութիւնները փակուած էին, նոյնպէս փակել էին դրամատները, մթերանոցները, կրավակները, պանդոկները եւ թափառը անցնելու միջացին օտար ազգիք եւս փակում էին իրենց վաճառանոցները եւ ուղեկցում Հայ Մատենագրի յուղարկաւորութեան մեծ հանդիսին:

Մայր Եկեղեցում, Ա.Պատարագից վերջ՝ Գորուայ աւագ քահանայ Տէր-Ստեփաննոս Տէր-Ստեփաննոսեանցը կարծ բայց շատ սրտաշարժ քարոզ խօսեց:

Դագաղը Եկեղեցուց դուրս բերելով՝ հանգիստ դրին առաջնորդարանի հանդէպ, որի սանդուխտների աստիճանների վերայից կարդացին նշանաւոր գամբանականներ:

Այսուհետեւ թափառը գաւթից դուրս եւստ եւ ընկաւ ուղին, երբ հասաւ գետի միւս կողմը՝ մրգավաճառանոցի փողոցը, որտեղ կըրպակատէր Հայերը լայն փողոցի մի կողմից գէպի միւս կողմը կախ էին արել ծաղկների փունջեր, որոնք կավառում էին Հանգուցեալի անուան սկզբատառը (Բ.), որոնց միջից ծածանում էր նա եւս դափնեայ մի մեծ պսակ, որի հովանեաց տակ գրած գագաղակիր սեղանի վերայ դագաղը հանգիստ դրին, որի աջ ու ձախ կողմերում սպիտակածածք սեղանների վերայ փայլում էին ճրագարանները, եւ մէջ տեղից կնդրուկի քաղցրահոտ ծովսր ծաւալում էր՝ ի վեր: Զը նայելով՝ որ առաւտեանից սկսած յորդ անձրեւը հետզետէ սաստկանում էր, սակայն ամբոխը երթալով առաւել եւս ստուարանում էր:

Երբոր թափառը հասաւ գերեզմանոցի երկաթեայ մեծ դրան առաջ, իւրաքանչիւր պատգամաւորներ՝ զոյգ ընկերներով վերցրին իրենց պատկաները սգակառքերի վերայից եւ թափառի առաջը գասաւորուելով քայլափոխում էին գէպի գերեզմանափոսը, որի եզերքը շրջապատուած էր քառակուսի բնդարձակ կամարով, ուր զետեղուեցան թափառին հետ պատգամաւորների գասակարգը: Կամարը ամբողջապէս ծաղկապարդ էր եւ չորս կողմերում ծաղկեայ շրջանակների մէջ առանձին առանձին գրտած էին Հանգուցեալի գրքերի անունները:

«Քրդեր» ժաղարդանշան,

Վերոյիշեալ հեղինակութիւններից պարզաբանվում է աշխատողի կեանքը, հմտալից տաղանդը, թանկագին նուիրաբերութիւնը, եւ յօժարակամ անձնազոհութիւնը: Միթէ, իւրաքանչիւր անձի հասկանալի չէ գրականութեան գժուարաքիրտ արհեստը եւ նորամարտիրոսական վիճակը: Ահա այս վիճակում համբերատար մնաց Ռաֆֆին ամբողջ երեսուն տարի: Երեսուն տարի գիշեր ցերեկ շարունակաբար գրեց նա, նորա զբոսավայրը՝ իւր գրասենեակն էր, եւ զբաղմունքը՝ գրելը, նորա զուարձութիւնը՝ իւր արձանագրած մատեանների վերակենդանութիւնն էր, եւ հանգստութեան ժամերը՝ նրանց սրբագրութեամբ պարապիլը. նորա պարապոյ ժամերը նորագոյն հեղինակութիւններն էին, եւ քնոյ քաղցր վայրկեանները նոցա երեւակայութեամբ զբաղուիլը:

Մինչ այսպէս տգնութեամբ շարունակում էր Շափփին կեանքի օրերը, գժիւեմ բաղդը կարծես նախանձեցաւ նորա թանկագին կեանքի վերայ եւ Ապրիլ ամսին թոքային բոբոքմամբ հիւանդացաւ, որին անմիջապէս օգնութեան հասան հայագն բժշկապետ պ. պ. Գասպարեան եւ Տէր-Գրիգորեանց եւ անմիջապէս աշխատեցան հիւանդի վտանգաւոր դրութիւնը ապաքինել, սակայն, եւ ահա յանկարծ նոյն ամսի 25-ին կաթուածահար մեռաւ:

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Ապրիլի 29-ին, նմանը չըտեսնուած հանդիսով:

Առաւտեան 9-ը ժամին Տիփիսի ամբողջ Հոգեւորականաց դասը իւր Սրբազն վիճակաւորով եւ գեր. Եիրակունի Յովհաննէս վարդապետով եկել էին ննջեցելոյ բնակարանը՝ Խօփ-Օրովրակայա փողոցում:

Մեծափառ թափառը ընկաւ ուղին՝ Ներսիսեան Դպրանոցի երգեցիկ խմբի առաջնորդութեամբ, գէպի Վանաց մայր Եկեղեցին:

Բազմութիւնը այնքան հոծ եւ ստուար էր, որ Դագաղը ուսերի վերայից էր ճանապարհորդութեամբ, գէպի Վանաց մայր երկու սգակառքեր, բարձուած պատգամանորդների բաղմաթիւ պատկաներով:

Գերեզմանակարգի միջոցում՝ նորից կարդացին դամբանական-ներ եւ երախտագիտական դրուագներ, որոնց հետ արարողութիւնը վերջացաւ ժամը չորսին:

Արդէն գերեզմանաբլուրը մշտնջենապէս բաժանեց Հայ հա-սարակութիւնը իւր սիրելի Մատենագրից եւ ՌԱ.Ֆֆին հողի տակ մնաց:

Սակայն այսչափով ըստ բաւականացաւ Կովկասի Հայ հասարա-կութիւնը նրան պատուելու, այլ Յունիսի Զին կատարեց նորա քառամորեայ հանգստեան՝ փառաւոր հոգեհանգիստը, որի առ-թիւ, նախապէս հրատարակեցին ազգային լրագիրները:

Նոյն օրը՝ ժամի 10-ին՝ Գերեզմանոցի եկեղեցում, սկսուեց հսնդիսաւոր Ս. Պատարագը. պատարագից վերջ հոգեւորականաց դասը պատշաճեալ զգեստիւք եկան գերեզմանին վերայ, որին շրջապատած էր ահազին ամբոխը: Մողնւոյ եկեղեցւոյ Տէր-Ղեւոն-դեան Մուշեղ քահանան խիստ սրտաշարժ քարոզեց եւ Հանգու-ցեալի աննման ձիրքերը դրուատեց. մի ոտանաւոր եւս մի Հայ պարոնից եւ մի արձակ ներբող եւս Ռուսերէն լեզուաւ մի Վրացի պարոնից կարդացուեցան:

Այս արարողութեան ներկայ էր Հանգուցեալի անբաղդ Այ-րին՝ իւր երկու որբ Մանուկներով:

Յուսկ ուրեմն 1888 թուականը իւր Ապրիլ ամսի 25-ին բե-րած աղէտաբեր հարուածով զարկեց եւ մահացրեց 53 տարուայ հասակում ազգային Մեծահանձար տաղանդաւոր՝ Բանաստեղծ, Վիպասան, Պատմաբան եւ բազմավաստակ Մատենագիր մեծ ԹԱՓՓԻԻ թանկագին կեանքը:

Հանգիստ ուկերացգ ՌԱ.Ֆֆի, հանգիստ ոսկերացգ, Դու-միշտ կենդանի պէտք է մնաս իւրաքանչիւր դարի Հայ սերունդ-ների հետ, մենք մեր օրերում քեզ միշտ պէտք է աւաղենք եւ Քո Յիշատակդ սուրբ պահենք, Քո Ալրին միմիթարենք եւ Քո Որ-դիքդ գաստիարակելու տանք, թերեւս նորա միմիթարեն մեզանից վերջ եկող Հայ որեարին Քո շնորհալից գորովով:

«ՅԻՇԱ.ԱԿՆ Ա.ՐԴԱ.ՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵՍ.ՄԲ ԵՂԻՑԻ»:

ՀՀ Ազգային գրադարան



NL0381577

71.408